

ԿՐԾՆԱԳԻՅՈՒԹԵԱՆ ԳԱՍԱԻԱՆԳՈՒԹՆ ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ.

(Ծ-Բ-Լ-Ի. Ա-Բ-Գ. Բ. Բ.)

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ:

Պանդ աննելով այն հիմքի վերայ թէ Աստուածաշնչի գրոյցները ամենա-
կարեւոր կրօնական բարոյական նշանակութիւն ունին. աւելորդ չի լինիլ
վճռել մէկ տարակուսանք՝ այն է Աստուածաշնչի պատմութիւնները կարող
են ներկայացնել իրանցմով կրօնական դատարարութեան առաջին աստի-
ճանը և կատարելապէս արդեօք նորա հասկանալի են երկխոյոց. Աստուա-
ծաշնչի պատմութիւնների դիւրամատչելի լինելու հարցը յառաջ է դալիս
ամենանշանաւոր ձգտումից. Նայելով բնաստութիւնների և բարոյական հի-
մանց բովանդակութեան վերայ, որոնք սրտայայտումն Աստուածաշնչի
անձանց կեանքի ամենապարզ երեւոյթների մէջ, անկարելի է չընկատել
նոցա բարդութիւնն, որոնց ըմբռնելու համար, երկխոյքը դեռ ևս չեն դուր-
գացած: Առաջին մարդոց անկումն, Պայէնի զգացմունքը, Յաւոյթի հոգե-
վառ դրութիւնը և ուրիշ շատերը՝ երկխոյոց համար ներկայացնումն կամ
աժափանակեալ, կամ աչիքան բարդ, որ երկխոյք կարող են միայն մերե-
նայարար իւրացնել այդ փաստերի մասին եղած պատմութիւնները: Աս-
տուածաշնչի պատմութիւնների վերայ ունեցած այդպիսի հայեացքը միջոց է
տալիս որոնել նիւթը Աստուածաշնչից դուրս. Հարկաւոր է նկատել, որ յի-
շած նկատողութիւնները պատկանում են իսկապէս հոգեով կրօնական ան-
ձանց, որոնք որոնումն իւրեանց երկխոյոց կրթութեան համար կրօնական
հիմք: Ուստի այդպիսի հայեացք կարող է բոլորովին անկեղծ ընդունուել:
Աստուածաշնչի պատմութիւններից զուրս կրօնական կրթութեան և ու-
սուցման համար հիմք որոնելու փորձերը այս հետեւեալ դատողութեանն են
հասցնում՝ եթէ Աստուածաշնչի անձինք ժամանակով մեղանից հեռու են,
և կեանքից վերցրած փաստերը բովանդակութեամբ բարդ են, այն ժամանակ
մեր ժամանակի մարդիկ մօտիկ են երկխոյոց. նոցա աչքի առաջ են ապ-
րում և կեանքի արկածները զննողութեան տակ են ընկնում: Պաղատա-
բապէս այդպիսի ձգտումն ամենացանկալին է ներկացանում, Պորձնականա-
պէս այդ ձգտումն հետեւեալ ձևերովն է արտայայտուած: Այս կամ այն ման-
կավարժը վերցնումէր տեսանելի բնութեան կամ մարդոց միմեանց մէջ ու-
նեցած յարաբերութիւնների երեւոյթները և հետադննդութեւն նոցա կրօնական
կողմից և ստացած եզրակացութեանց վերայ աշխատումէր կառուցանել վարուց
կանոններ և իւր սանիկները զգացմանց կեանքի հիմունքներ: Արեւիսոյք
եկել են ուսումնարան սովորելու: Ուսուցիչը նոցա սովորեցնումէ, Նոքա
պէտքէ նորան լսեն, սիրեն և յարգեն: Այդ է յանկանում և Աստուած:
Անտանիքի մէջ ապրումն երիտասարդներ, ծերեր և երկխոյք: Արիտա-
սարգները մեծ ուժ ունին. նոքա, այդ պատճառով, պէտքէ հոգս քաշեն

ծերերի և փոքրերի մասին: Սորանով նորա կը կատարեն իրանց Աստուծոյ պատգամը:

Այդ փորձերը դուրկ չեն ճշմարտութիւնից այն կողմանէ, որ Աստուածաշնչի պատմութիւնները պէտք է մօտիկ լինին երեխայոց հասկացողութեանն: Բայց սա ինքն ըստ ինքեան ոչինչ ուրիշ բան չի ներս բերում, իսկ բարոյականի վերաբերմամբ շատ տեղերում տեղ է տալիս Աստուածաշնչի պատմութիւններին: Աստուածաշնչի մէջ մենք ունինք բարոյական ամբողջացրած պատմութիւններ, որոնք զօրեղապէս են ազդում երեխայի հոգու վերայ, իսկ վերեւ յիշած փորձի մէջ երեւումէ ձգտումն ստեղծելու մտածողական ծանապարհով բարոյական զբաղմունք: Հասակ առած մարդ կարող է փաստերով համոզուել և, եթէ ցանկանումէ փոխել իւր վարքը: Իսկ երեխան պէտքէ իրան համար աննկատելի կերպով բերուի բարի ծանապարհի վերայ կենդանի օրինակներով և թէ վաղուեան անձանց մասին եղած պատմութիւններով: Իսկ ինչ կը վերաբերի այդ պատմութիւնների բովանդակութեանն նորա, որպէս և շատ ներկայ ժամանակիս երեւոյթների պայմանական են երեւում, ուստի և երեխայոց զիտակցութեան մէջ դժբա կարող են ներկայանալ իբրեւ ո՛չ պարտաւորական:

Արտայայտելով խորհրդածութիւնները այն հարցի մասին թէ Աստուածաշնչի ո՞ր մասից պէտքէ սկսել սրբազան պատմութեան դաստանդումն, մենք ժամանակն ենք համարում անցնել նոյն իսկ պատմութեան կուրսին: Սկսել ուղղակի հին կտակարանի առաջին տեղեկութիւնների պատմողական բացատրութիւնից, ընդունենք հէնց այն ձևով ինչպէս նորա հաղորդումն մի որ և իցէ դասադրբի մէջ կամ մինչև անգամ նոյն իսկ Աստուածաշնչում: Բիշ օգտաւետ կըլինի երեխայոց համար: Աւստի և խորհուրդ են տալիս կրօնագիտութեան առաջին դասերում ծանօթանալ երեխայոց այն կրօնական հասկացողութեանց հետ, որոնց նորա իւրացրել են մինչև ուսումնարան մտնելը: Այդ խորհուրդը ունի այն կարևոր նշանակութիւնը, որ կրօնուսոյցը կը ծանօթանայ իւր ունկնդիրների իսկական բարոյական աստիճանի հետ և յետոյ կարող է գործել բոլորովին կրթողաբար, այսինքն կուղղէ նոցա սնտրիապաշտութիւնները կամ սխալ հասկացողութիւնները: Իւրաքանչիւր ուսուցիչ կարող է հետեւել այդ խորհրդին: Բայց երիտասարդ և անփորձ ուսուցիչներին աւելորդ չի լինի ի նկատի ունենալ, որ այդ կերպ ուսուցանելը, իւր ամենակարեւորութեամբ, դժուար գործ է, մէկ կողմից այն պատճառով, որ ուսուցչից պահանջվումէ գործունէութիւն երեխաներին հարցնելու գործում, միւս կողմից այն պատճառով, որ շատ ժամանակ է խլում, և կարող է ունենալ աննշան արդասիք: Աւստի առաջին ժամանակ կրօնուսոյցին չի հարկաւոր իւր բո՛ւն նպատակը դնել երեխայոց կրօնական հասկացողութիւնները ուսումնասիրելու, այլ նոցա դատողութիւնները լսել սակաւ առ սակաւ: Բարեխղճաբար կատարելով գործը, նա կամաց կամաց կը փորձուի և այն ժամանակ գործունէութեան այդ կողմը յաջողակ կը լինի: Վերեւ յիշուած խորհուրդը կերպարանափոխուած իրագործվումէ հե-

տեւեալ կերպով, Կրօնուսոյցը երեխայոց հետ խօսակցումէ, պարզելու նպատակաւ նոցա առաջին, անորոշ և մութն հասկացողութիւնները Աստուծոյ և Նորա յատկութեան մասին, հրեշտակների մասին, մարդու մասին Նորա հոգեւոր կողմից, այսինքն այն հասկացողութիւնները, որոնք քիչ լծէ շատ սովորել սկսող երեխային սեփհական են, Կրօնուսոյցը իւր դասերով երեխայոց այնպիսի հասկացողութեան աշխարհ է տանում, որը իւր ընդհանուր հիմանց վերայ շատ մօտիկ է մարդու հոգուն՝ բայց մասնաւորապէս, կրօնական մտապատկերների և զգացմանց ձևով կարող է երեխայոց համար լինել մութն և հեռու, Աստի և հարկաւոր է նոցա ծանօթացնել տեղեկութեանց այն Նոր շրջանի հետ, որի մէջ կրօնագիտութեան առաջին դասերով մտնումեն, Այդ հիմնական տեղեկութիւնները միշտ կարող են պատահել սրբազան պատմական զրոյցների մէջ, որպէս ներքին գործութիւն, որը կառավարումէ մարդոց գործողութիւնները, Յանկայի է՝ որ կրօնուսոյցը, երեխայոց հոգւոյ մէջ քիչ ստացած տեղեկութիւնների հիման վերայ, նոցա մէջ ծագեցնէ անձնական, իրանց հասկանալի խորհրդածութիւններն և գորանով նոցա աստուածածանօթութեան ճշմարտութեանց հասկանալուն նըպաստէր: Յոյց տուած յատակագծին (պլան) համեմատ պէտքէ սկսել աշխարհի և մարդու ստեղծագործութիւնից: Այդ փաստերի մէջ մարդոց յայտնուեցան Աստուծոյ էական յատկութիւնները: Բնական է, որ առաջին զրոյցները կը վերաբերեն Նոյն իսկ տեսանելի բնութեանն, որպէս երեխայոց գննողութեան համար մօտ ըմբռնելի առարկայ: Սորա հետ հարկաւոր է երեխայոց ուշադրութիւնը գործնել բնութեան միջի այն երեւոյթներին, որոց մէջ Նոքա արդէն սովորել են տեսնել Աստուծոյ գործողութեան յայտնութիւնները: Շատ կօրեւոր է, որ Աստուծոյ, որպէս յայտնի երեւոյթների պատճառի մասին՝ ունեցած մտապատկերն ստանալ իրատ կրօնական բնաւորութիւն: Թող երեխայք իրանց սեփհական դատողութիւններով համոզուին, որ Տէրն է կառավարում ամբողջ աշխարհը:

Ստեղծագործութիւնից սկսած Նորա սուրբ կամքով արեւակը գուրս է դալիս և մայր մտնում և տաբացնում իւր ճառագայթներով աշխարհը: Աստուած տալիս է իւր անասուններին, բոյսեր և կենդանիք յօդուտ մարդուն, մենք նորանով ապրում ենք, շարժւո. մենք և գոյութիւն ունինք: Այդպիսի առաջին զրոյցներով երեխայոց հասկանալի կը լինի ժամանակով շատ վաղ իրագործուած աշխարհի ստեղծագործութեան փաստը: Մարդոց և աշխարհի մասին Աստուծոյ մշտական հոգատարութեամբ կատարվող երեւոյթների մէջ երեխայք կը տեսնեն ստեղծիչ աստուածային գործունէութեան շարունակութիւնը: Եւ այդ բոլոր երեւոյթներում Տէրն կը ներկայանայ գործող իւր բնութեան ամենիմաստ, ամենաբարի, ազատ յատկութիւններով: Եթէ կրօնուսոյցը վառ զգացմամբ է վերաբերվում՝ դէպի տեսանելի բնութիւն, թող նա Նոյնը դէպի բնութիւն ներշնչէ և՛ երեխաներին, Երեխայք իւրեանց բոլոր կեանքում միշտ Նորան պարտական կը լինեն իւրեանց կրօնական զգացման ջերմեռանդութեամբ: Բացի տեսանելի բնութիւնից ա-

առջին զրոյցների բովանդակութիւնը պէտքէ վերաբերի նոյն իսկ երեսայոց՝
 նոցա հոգուն, կեանքի բարոյական և կրօնական կողմերին, թէ այսպէս և
 թէ այնպէս, երեսային կարելի է պարզել իւր ինքնագիտակցութեամբ հոգ-
 ւոյ և մարմնոյ պահանջների զանազանութիւնը, Երեխան ծանօթանումէ բո-
 լոր շրջապատող առարկաների հետ, նա գիտութեան մէջ յառաջադիմու-
 թեան ժամանակ ուրախանումէ, անյառաջագիմութեան ժամանակ տխրում,
 իւր մի քանի գործերի ժամանակ զգումէ ներքին բաւականութիւն, հան-
 գիստ զգացմունք, անհանգիստ է լինում և տխրում ուրիշ գործերի ժամա-
 նակ, Գործերի միջի զանազանութիւնը պարզել, զարգացնել երեսայոց ա-
 սաջ բարի և չար հասկացողութիւնները, կրօնուսոյցի ամենագլխաւոր նը-
 պատակն է կազմում, Այս ճանապարհով երեխան կը հասկանայ պատմա-
 կան անձանց ներքին կեանքը՝ մարդոյ մէջ բարւոյ և չարի պատերազմական
 շրջանի ժամանակի այն դրութիւնը՝ որը կրօնական կրթութեան գլխաւոր
 նպատակն է կազմում, կարող է զգացնել տալ ամենատանգուն ձգտումն
 զէպի արդարութիւնն, և անմեղ կեանքն, Առաջին զրոյցների բովանդակու-
 թեան երկրորդ աղբիւրը կարող է փրցնուիլ առօրեայ կեանքից, նոյն իսկ
 զրուցները կարողեն կապակցարար գնալ սրբազան պատմութիւնների կամ
 աղօթքների հետ, բայց կարողեն և բաժանուիլ թէ՛ գորանից և թէ՛ միւսից,
 այդ կախուած է ուսուցչի հայեացրից, Յետագայ առաջարկած զրոյցների վե-
 րաբերմամբ կարեւորենք համարում նկատել, որ ուսուցիչը աւելի լաւ կը
 վարուի, եթէ նա համաձայնի մտքի բնական զարգացման հետ կենդանի իո-
 սակցութեամբ, Երեսայոց պատասխանների մէջ կը պատահեն շեղումներ և
 սխալներ, իսկ գորա հակառակ կը լինին և ամենայաջող պատասխաններ,
 որոնք զրոյցի գլխաւոր բովանդակութիւնը պէտքէ կազմեն, Աստի և զրոյց-
 ների մէջ պէտքէ ան-ը ճշաւ նախապէս մտածած պլանի վերայ, Ահա զրոյց-
 ների օրինակ մէկ զաստատան հետ՝ սխալով առաջին դասից.—Երկրորդ տա-
 րին մնացած աշակերտներից մէկը աղօթքն ասումէ, Գաստտան մէջն կա-
 խած է Աւետման պատկերն, սկսումեն հարցեր ուսուցչի կողմից.—Մենք
 այս բոպէիս ի՞նչ արինք.—Աղօթեցինք, Ի՞նչ կը նշանակէ աղօթել,—Աս-
 տուծուն խնդրել, Ի՞նչի մասին պէտքէ խնդրել Աստծուն մեր աղօթքնե-
 րում.—Մենք նորան խնդրումնք այն մասին, ինչ որ մեզ հարկաւոր է լի-
 նում, Մենք խնդրումնք միշտ.—Օրինակ մարդ երկար ժամանակ հիւանդ
 էր, նա աղօթեց Աստծուն և առողջացաւ, նա ի՞նչ է ասում Տիրոջն ա-
 ղօթքում.—Շնորհակալ է լինում Տիրոջից իւր առողջանալու համար, Ի՞նչ
 պատկերի առաջ մենք աղօթեցինք.—Աղօթեցինք անարատ կուսի աւետման
 պատկերի առաջ, Ո՞վ է նկարած այդ պատկերի վերայ.—Աստուածամայրն և
 հրեշտակն, Մենք կարո՞ղ ենք տեսնել Աստուածամօրն.—Ո՞չ.—Ինչո՞ւ.—
 նա լուսնանել է, Երբեօք դը մին նորան տեսել է.—Շատերը տեսել են
 նորա կենդանութեան ժամանակ երկրիս վերայ.—Կարո՞ղ ենք մենք տեսնել
 հրեշտակին.—Ո՞չ, Ի՞նչու.—Որովհետեւ մենք մեղաւոր ենք, Այդ ճիշտ
 է՛ հրեշտակները երեւումեն և՛ սուրբ և՛ մեղաւոր մարդոց, Սրբերին հրեշ-

տակը երևումէ միմիարեւելու և Աստուծոյ ուրախութիւնը նոցա պատմելու համար, Մեղաւորներին նա երևումէ յանդիմանելու համար նոցա վատ գործերում, Եւ այսպէս ուրեմն բոլոր մարդիկ կարող են տեսնել հրեշտակին, — Բոլորը կարող են միայն երբ Տէրը ուղարկէ հրեշտակին և նա էլ մարդոց կերեայ, Երբ հրեշտակը երևումէ, այն ժամանակ տեսնումն, Ինչո՞ւ հրեշտակը միշտ անտեսանելի է, Մենք ի՞նչ ենք տեսնում միմեանց վերայ, — Գլուխ, աչքեր, ձեռքեր, ոտներ և ուրիշ մասներ, Բոլորը, ինչ որ մենք մարդու մէջ տեսնումենք, մարմին է կոչվում, Մարդս բացի մարմնից ի՞նչ ունի, Առարկայի մասին մենք ի՞նչպէս կարող ենք իմանալ, Ի՞նչպէս եւ կարող եմ իմանալ այն տան մասին, որի մէջ դուք բնակումէք, — Եթէ ես նայեմ նորան, կամ դուք պատմէք նորա մասին, Ինչո՞վ ես կը նայեմ ձեր տանն, — Աչքերով, Իսկ ինչո՞վ ես կը լսեմ ձեր պատմութիւնը տան մասին, Ահանջներով, Բայց երբ ես դուրս գամ ձեր տանից, կարող եմ իմանալ նորա մասին, Ի՞նչպէս եւ կարող եմ յիշել նորա մասին, ինչ որ տեսել եմ, կամ ինչ որ լսել եմ, — Մարդու մէջ կայ անտեսանելի հոգի, որը յիշումէ այն, ինչ որ մենք տեսել ենք, լսել ենք կամ իմացել ենք մեր ճաշակի շօշափման և հոտառութեան միջնորդութեամբ, Մարդու հոգին է ոգի, Ոգուն անկարելի է տեսնել, Ի՞նչու մենք միշտ հրեշտակներին չենք տեսնում, — Հրեշտակները ոգի են, որոց անկարելի է տեսնել, եթէ նորա տեսանելի կերպով չերևան, ինչպէս, զոր օրինակ, Սուրբ կոյս Մարիամի աւետման ժամանակ, Բացի հրեշտակներից և մարդու հոգուց, Աստուծոն եւ չի կարելի տեսնել, որովհետեւ նա Հոգի է, Վարելի՞ է իմանալ նորա մասին, որը մենք չենք տեսել, Վարելի՞ է իմանալ նորա մասին, որին ոչ որ ոչ մի ժամանակ չի տեսել, զոր օրինակ, Աստուծոն, — Մարդ չի կարող նորան տեսնել, Տեսնելով դասատան սեղանը, պատուհանի շրջանակը, սենեկի վառարանը կամ մարդուս մի որ և իցէ դործն, դուք կարող էք ասել, ի՞նչպէս կոչվում, ասենք, սեղան շինող մարդը, — Հիւսն, Ձեզ հարկաւոր է արգեօք տեսնել նորան իմանալու համար թէ նա կարող է շինել, և ի՞նչպէս է նորա աշխատանքը, — Ո՛չ, Դուք ի՞նչպէս կարող էք իմանալ, թէ նա կարող է շինել, — Նորա գործերով, կամ աշխատանքով, Եւ այդպէս ձեզ անպատճառ հարկաւոր չէ տեսնել մարդուն նորան ծանաչելու համար, Բաւական է միայն նայել նորա աշխատանքը, գործերը, և դուք կ'իմանաք, որ նա կարող է շինել, Գործերով մենք կարող ենք իմանալ և՛ հրեշտակների և՛ Աստուծոյ մասին:

Դուք աստուածային ի՞նչ գործեր գիտէք, նայեցէք այս սենեակի մէջ՝ ի՞նչ գործեր կան աստուածային և ի՞նչ գործեր մարդկային, Գասատան սեղանը ո՞ւմ գործն է, — Մարդկային՝ հիւսն է շինել նորան, Իսկ փայտը, որից նա շինուած է, ո՞ւմ գործն է, Աստուծոյ՝ Աստուած նորան բուսցրեց, Գիշերը մենք վառումենք մոմ սենեակը լուսաւորելու համար, կամ ճրագ, Ցերեկը ինչո՞ւ լոյս է լինում, — Արեգակը լուսաւորումէ, Ամեն օր նա մի տեսակ է լուսաւորում, — Ո՛չ, Երբեմն լինումէ մոռլապատ, արե-

գակին չենք տեսնում, բայց լոյսը նորանից հասնումէ մինչև մեզ խրա-
քանչիւր օր և մարդս կարող է աշխատել առաւօտուանից մինչև երեկոյ,
Միայն մարդու համար է օգտաւէտ արեգակը իւր լոյսով: — Ո՛չ, երբ նա
լուսաւորումէ և տաքացնում՝ աճումէ խոտն կենդանեաց համար, հացը
մարդու համար: Առանց տաք ամառնային արեգակին չէին աճիլ ծառերը
անտառումն, այգիումն, խոտը՝ մարգագետիններում և հացը՝ դաշտերում:
Արեգակն և նորա լոյսը ստեղծել է Աստուած, նա կարգեց, որ արեգակը
այդպէս շատ օգուտ բերէ: Չմեռն մարդոց համար ցուրտ է լինում, հար-
կաւոր է պաշտպանուիլ ցրտից, ամառը անձրևից՝ մարդոց հարկաւոր է տուն,
նոքա ինչից են կառուցանում իրանց տունը: — Աղիւսներից, քարերից,
կաւից գերաններից, Այդ բոլորը մարդու օգտի համար ստեղծեց Աս-
տուած: Մարդուն հարկաւոր է հագնելիք, — Աստուած ստեղծեց բոյսեր,
որոնցից մարդիկ կարողանումն պատրաստել իրանց համար քաթան և
ստեղծեց կենդանիք, որոց մաղից կամ կաշուց մարդիկ շինումն իրանց
համար տաք հագնելիք, Հարկաւոր է երեսային պահպանել, մինչև կը մե-
ծանայ — Աստուած հօր և մօր սրտին տուեց սէր դէպի իւրեանց որդիքն:

Աստուածային գործերը շատ են և նոքա ցոյց են տալիս մեզ Տիրոջ որպի-
սութիւնն: Նա բոլոր մարդկերանցից ամենից բարի է, նա միայն բարի է
գործում և ոչ մէկին ոչ մի ժամանակ չար չէ արել, Տիրոջը անուանումն են
— Բնօրէն: Գուք Աստուծոյ տաճարումն տեսնումէք սուրբ պատկեր, կարողէ՞ք
նկարել այնպէս, ինչպէս նա նկարած է. — Այժմ ոչ, Բայց եթէ դուք
երկար ժամանակ նկարել սովորիք, այն ժամանակ կարող էք, — Գուցէ և
լաւ նկարենք: Տեսնելով ինչպէս մէկ մարդ շօր է կարում, միւսը շինումէ
անիւ սայլ, կառուցանումէ տուն, դուք կարողէք սովորել շինել այնպէս՝ ինչ-
պէս նոքա այդ շինել են: Տեսնելով, ինչպէս այգեպանը ծառերին օգնումէ
կանոնաւորաճել և լաւ պտուղներ բերել, դուք կարող էք սովորել բոյսերի
վերայ հոգս տանել: — Մարդուս բոլոր գործերին մեկը կարող ենք նմանե-
ցնել, Բայց կարող ենք Աստուածային գործերին նմանեցնել, Կարող ենք արդ-
եօք, զօր օրինակ, ստեղծել հացահատիկ, ծառ, խոտ, ծաղիկ, թռչուն,
կենդանի: — Ո՛չ, — Մարդս, կարելի է՝ ծաղիկ կը շինէ թղթից, կամ մի
որ և իցէ նիւթից, բայց չի կարող նորան կեանք տալ, Մեղանում ինչպէս
են անուանում այն մարդուն, որը բոլորից շատ գիտէ, բոլորից լաւ է շի-
նում, Խելօք, իմաստուն, Տերօջը մարդկերանցից որոշելու համար անուա
նում են վերին աստճանի իմաստուն, — Բնօրէն: Չեղ ո՞վ է ուղարկել ու
սումնարան: — Ծնողներս, Ինչ կասէք դուք, բոլորդ կը գա՞յիք ուսումնա-
րան: Եթէ ձեզ ձեր մեծերը չ'ուղարկէին: — Շատ կարելի է մի քանիսները
չ'գա՞յին: Գուք ինչու էք հաւաքուել այստեղ, — Սովորելու, Ես ձեզ պատ-
մումմա՞մ միայն դուք բոլորդ էք ուղարկութեամբ լսում: Չեղ, կարող եմ
ստիպել ուղարկութեամբ լսելու: Գուք բոլորդ ինձ վերայ կը նայէք, միայն
նա կարող է լսել, ով ցանկանումէ: Ի՞նչն կը պակասի այն երեխաներին, որոնք
ինձ չ'են կամենում լսել: — Ուղարկութիւն: Արտաքուստ մարդուն կարող

են ստիպել՝ միայն այդ աշխատանքը լաւ չի լինել։ Անժողովները, որ ձեզանից մէկը ցանկացաւ գնալ տուն մինչեւ դասի վերջը, արդեօք ես կարող մ'նորան պահպանել եւ արդելիլ։ Աս մեծ եմ իսկ դուք դեռ երեսաքէք, ուստի եւ այդպիսի երեսային ես կարողեմ ուժով պահպանել զաստան մէջ։ Բայց ես կը պահպանեմ մարմնը, իսկ հոգին ոչ։ Ինչպէս կանուանէք մարմնին, այն պատճառով, որ նա ուրիշի կամքով է գործում, ինչպէս եւ անուանում այն թուշուներն, որը վանդակի մէջ է ձգած։ Իսկ այն ինչպէս որը թուշում է օգուտ, Թուշուներն ո՞ր եւ թողնում վանդակից, — Ազատութիւն եւն տալիս։ Ինչպէս է կոչվում օգուտ թուշող թուշուներ, — Ազատ։ Իսկ վանդակի մէջի նստածը, — Գերի։ Ինչպէս կանուանէք մեր մարմնին, որը ուրիշի կամքով է վարվում, — Գերի։ Մեր հոգին միշտ վարվումէ իւր կամքով, դուք նորան ինչպէս կանուանէք, — Ազատ։ Ձեզանից երկուսի մայրերը հիւանդ են։ Մէկիդ մայրը հրամայելէ նստել իւր մահճակալի մօտ եւ նորան օգնել, միւսը ինքը հասկացաւ մնալ հիւանդ մօր մօտ։ Ա՞րը լաւ վարուեց, առաջինը, թէ երկրորդը, — Երկրորդը, Ինչու։ Նա իւր կամքով գործեց, Աստուծոյն հրամայելէ, միւսը ինքը հասկանումէ թէ ինչ է հարկաւոր անել եւ անումէ այդ ուրախութեամբ։ Ա՞րը լաւ վարուեց, առաջինը, թէ երկրորդը, — Երկրորդը, Ինչու։ Նա իւր գործը կատարումէ ուրախութեամբ։ Մէկ երեկոյց ինքը ցանկացաւ գնալ եկեղեցի, միւսին ուղարկեց մայրը։ Ա՞րի վարժուեքը աւելի հաճելի կը լինեն տիրոջը, — Առաջիններ, որովհետեւ նա ինքն ազատակամ գնաց տաճարը։ Մեր իւրաքանչիւր մարդու մէջ գնահատումներ նորա կամքը կամ ազատութիւնը։ Արքան լաւ է վարվում մարդս իւր կամքով, այնքան աւելի յարգանք կայ դէպի նորան, դէպի նորա ազատ հոգին։ Ա՞յ ստեղծեց աշխարհը — Տէրն։ Ա՞յ նորան ստիպեց ստեղծել աշխարհը, — Այ որ չի կարող ստիպել Աստծուն։ Նա ինչո՞ւ ստեղծեց աշխարհը։ Հարկաւոր է արդեօք տիրոջը աշխարհը, — Այ։ Իուք ինչպէս էք կործում։ Աստծուն հաճելի է, եթէ մարդ լաւ է վարվում։ Օրինակ վերջիւք մարդկերանցից՝ ուրախալի է ուսուցչի համար, երբ դուք նորա բացատրութիւնը հասկացել էք։ Ինչո՞ւ ուսուցիչը ուրախանումէ, երբ նորա բացատրութիւնը հասկանալի է լինում։ — Նա մտածումէ որ իւր աշխատանքները իդուր տեղը չլիորան։ Ինչպէս եւ վերաբերվում մեծերը՝ տեսնելով փոքրերի յառաջադիմութիւնը, — Նոքա ուրախանումեն։ Բեկացի մարդը ցանկանումէ, որ բոլոր մարդիկ խելացի լինին։ Մարդս ինչպէս որ ինքն է, այնպէս եւ ցանկանումէ ուրիշներին տեսնել։ Ինչո՞ւ մեծերը՝ աւելի խելացիները՝ փոքրերի համար ուրախանումեն։ Ինչո՞ւ մայրը՝ նայելով իւր որդու վերայ՝ ուրախանումէ երբ որ նա սկսումէ մանկալ եւ խօսել, — Նա սիրումէ նորան։ Ա՞րք եւնք մենք ուրախանում ուրիշ մարդոց լաւ յառաջագիմութեան համար եւ օգնում նորան բարութեան մէջ։ — Երբ մենք ինքներաւ ինքն լինում։ Ինչո՞ւ Աստուած աշխարհը ստեղծեց, — Նա վերին աստիճանի բարի է։ Արդեօք ստիպեց նորան որ մին այդ գործումն։

— Այ, նա ազատ է, Որպէս բարի նա շատ բարութիւն արեց աշխարհումս։
 Զեղանից ո՞վ կը յիշէ այն տունը, թէ ի՞նչպէս են շինել, որի մէջ դուք
 ապրումէք, Վար ժամանակ, երբ տունը չկար, Վար ժամանակ, որ մենք
 ծնած չէինք, և գոյութիւն չունէինք, Վար ժամանակ, որ մեր ծնողները
 չըկային աշխարհիս վերայ, երբ դեռ չէին սկսել ածել այժման հաստ ծա-
 ուերը մեզ ծանօթ անտառի մէջ, չըկար երկիրը և արեգակն, Յետոյ այդ
 բոլորը յայտնուեցին, սկսեցին ապրել, Ամենից առաջ ապրումէք Տէրը, Նա
 երբէք ժամանակաւորապէս չի սկսել ապրել, ուստի և կոչուեմք *Հօգին*։
 Կենք ձեզ հետ միշտ պէտք է ապրենք, — Ա՛յ, Վրամնունք, Ի՞նչ կըլինի մեզ
 հետ մահից յետոյ, — Կարմիր կըթաղեն հողի մէջ իսկ հոգին միայնակ
 կապրի առանց մարմնոյ, Ի՞նչ է լինում խոտի, ծառերի, թիթեռների և
 ձանձերի հետ ձմեռը, Ձմեռը խոտը սառչումէ, ծառերը դադարումն ածե-
 լուց, միջատները սառակումն, Ի՞նչ է պատահում գարնանը միջատների
 հետ, Նոքա կենդանանումն, Վրնշանակէ նոցա մահը առ միշտ էր, — Ա՛յ,
 առ ժամանակ, Եթէ ձմեռը ծառերի վերայ նայենք, կարելի՞ է արդեօք ասել,
 թէ նոցանից ո՞րը բոլորովին չորացել է և ո՞րը կենդանի է, — Ա՛յ, ան-
 կարելի է ասել, ձմեռն էլ կենդանի ծառը չորացած կերևայ, Ի՞նչէ լի-
 նում գերեզմանի մէջ մարդու մարմնի հետ, — Նա իթումէ և կորչում,
 Նա բոլորովին է անյայտանում, — Ա՛յ—բոլորովին կը գայ գարուն և բո-
 լոր մարդոց համար, երբ նոցա մարմինները նորից կըկենդանան և կը մի-
 անան հոգիների հետ, Վր նշանակէ մարդու կեանքին վերջ կըլինի, — Կարմնոց
 համար վերջ կըլինի իսկ հոգուն վերջ չի լինի, Կարգուս հոգին անվերջ
 է, Աստուած ստեղծեց մարդու հոգին, հրեշտակներին— և Նա ինքն էլ ան-
 վերջ (անսահման) Հոգի է, Այլապէս Տիրոջն անուանումն յաւիտենական
 (մշտնջենական), այսինքն որ չունի ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ, Աստուած միշտ
 ապրել է և միշտ կապրի, Վրկենցէք դուք՝ ի՞նչ իմացաք Աստուծոյ մասին,
 ո՞վ է Նա ըստ իւր բնութեան, — Աստուածն է Հոգի ամենաբարի ամենի-
 մաստ, ազատ մշտնջենական, (յաւիտենական)։

ԱՆԵՐԵՒՈՅԹ ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՐԵՇՏԱԿ-
 ՆԵՐԻ ԴԷՊԻ ՄԵԶ ՈՒՆԵՑԱԾ ԵԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ,

Աստուած ծայրագոյն բարի է և իւր կամքով ստեղծեց աշխարհը, այսինքն
 այն բոլորը, ինչ որ կայ, Դուք գիտէք, ո՞ւմ չի կարելի տեսնել, — Հրեշ-
 տակներին, մարդու հոգուն, Աստուծոն, Հրեշտակները աներևոյթ աշխարհն
 են կազմում, Տէրն առաջ ստեղծեց հրեշտակներին, Երբ մենք ասումանք
 աշխարհ, գործնով ի՞նչ ենք արտայայտում, Ասումն, զորօրինակ ողջ
 աշխարհն զձեռեց, երբ մի բան զձեռած է շատ մարդոց ժողովատեղում,
 Հետեապէս աշխարհ բառով քանի՞ մարդ պէտք է ընդունենք, — Հաստ Ի՞նչ
 պէտք է հասկանալ «աներևոյթ աշխարհ» բառերից, — Հրեշտակների
 բաղմութիւն, Վարելի՞ է արդեօք—բոլոր մարդոց ճիշտ հաշուել աշխարհիս
 վերայ, — Հաստ գիտար է, Հրեշտակները աւելի շատ են, քան թէ մարդիկ,

Որտեղ են բնակվում հրեշտակները, — Երկնքումն, Հարկաւոր է արդեօք տեղ մեր հոգու համար, որ նա բնակուէր, Գուք ի՞նչ գիտէք հոգու մասին, — Նա անմարմին ողի է, Այժմ՝ դուք նստած էք դասատան մէջ, կարօղէք արդեօք դուք այժմ լինել և ձեր տանն, — Կարող ենք, Ինչո՞ւ, Հոգւով, — Ո՛չ, ձեր մտքով, Իսկ կարօղէք լինել մտքով հետու պնտեղ, զորօրինակ, ուր ձեր հայրն է, — Կարող ենք, Եւ այսպէս՝ դուք ձե մտքով կարօղ էք այս բոպէիս լինել թէ մօտիկ, և թէ շատ հեռու և դորա վերայ ժամանակ գործ դնել շատ քիչ, մինչև անգամ մէկ բոպէից քիչ, մէկ ակնթարթ, ինչպէս ասումեն, Եթէ դուք ցանկանայիք ձեր սրտով ցաւակցել ձեր հիւանդ մօրն, հարկաւոր էր արդեօք ձեզ դնալ այժմ՝ դասատանից, կամ կրկնապէք ցաւակցութիւն նստելով դասատան մէջ, Կարելի է, Կընշանակէ, դուք կարող էք և ձեր սրտով աչքից հեռօին սիրել, Ահա դուք իմացար, որ ձեր հոգին մտքով և սրտով շատ շուտ՝ մէկ ակնթարթում — կարող է անցնել մէկ տեղից միւսն, Այժմ՝ դուք ի՞նչ կասէք, հարկաւոր է արդեօք տեղ մեր հոգու համար, — Ո՛չ, չի հարկաւոր, Կեր հոգուն նմանումեն և հրեշտակները, Հարկաւոր է արդեօք տեղ հրեշտակների համար, — Ո՛չ, նոքա ողի են, և նոցա տեղ չի հարկաւոր, Բայց մարդիկ ասումեն հրեշտակների համար որ նոքա երկնքումն են ապրում, Ի՞նչ պէտքէ հասկանալ «երկինք» բառից, Երկինքը, որը դուք ձեր վերեն էք տեսնում, օդ է, Հեռուից նա մեզ կամար է երևում, Ելի «երկինք» բառով հասկանումեն բաղդաւոր կեանք, Տեսածէք արդեօք դուք ընտանիք, որի մէջ միշտ վիճէին, Հաճելի է արդեօք լինել այդպիսի ընտանիքի մէջ, — Ո՛չ, ընդհակառակն, լաւ ընտանիքի մէջ, ուր բոլորեքեանք ապրումեն խաղաղ և համաձայն, դուք ի՞նչ էք զգում, Կեղ ցանկալի է այնտեղ մնալ, Այդ ընտանիքի մէջ կեանքը մեր անուանումներ բաղդաւոր, հրեշտակները ամենայն տեղ ապրումեն միմեանց մէջ սիրով, Մանաւանդ նոցա կեանքը երջանիկ է և այն պատճառով, որ նոքա ապրումեն Տիրոջ հետ միասին, Գուք ե՞րբ կարողէք ձեր մասին ասել, որ բաղդաւոր էք, — Երբ մենք առողջ ենք և մեզ սիրումեն, Ելի ե՞րբ, Սիրումէք արդեօք լինել այն պայման, ուր կան շատ ծաղիկներ և թռչուններ, — Սիրումենք, Ինչո՞ւ, Սիրումէք դուք արդեօք լսել մի և նոյն առակը, պատմութիւնը, մի և նոյն գիրքը կարդալ, — Ո՛չ, Մի տեղամ կը լսենք և ապա ցանկալի է լսել ուրիշ նոր բան, Մարդս ինչպէս է զգում իրան, երբ կարդումէ նոր գիրք, Լսումէ արդեօք ինչ մի նոր բան կամ տեսնումէ նոր բան, որ չէո տեսել, — Նորան սիրելի է այն պատճառով, որ նա նոր բան է իմանում, Ասացէք, դուք այժմ ի՞նչ կը ցանկանայիք տեսնել, — Առեւծին, վագրին, գայլին, արջին, աղուէսին, սկիւռին, ծովին, երկաթուղուն, քաղաքին, ձեր հօրն, Ահա ձեզանից իւրաքանչիւրը իւր ցանկութիւնը ունի, Գուք կուրախանա՞ք, երբ ձեր ցանկութիւնը կատարուի, Շատ կուրախանաք, դուք բոլորդ էլ ցանկանումէք տեսնել այն, ինչ որ բոլորովին չէք տեսած, Ձեզանից մէկը ցանկանումէ տեսնել իւր հօրը, Նա խօ՞ծանաչումէ հօրը, — Ես ցանկանումեմ տեսնել, որով-

Հետեւ նա տնից վաղուց է գնացել, եւ այսպէս՝ մենք սիրում ենք միշտ տեսնել նոր բան, եւս առաւել հաճելի կը լինի տեսնել և այն, ինչ որ մենք սիրում ենք, Սիրելով ծնողներին մենք ուրախութեամբ նայում ենք նոցա վերայ, միշտ պատրաստ ենք խօսակցել նոցա հետ, տխրում ենք, երբ նոքա մեզանից գնում են, ևս առաւել տխրում ենք, երբ նոքա բարկանում են մեզ վերայ և դադարում են մեզ հետ խօսակցելուց, Հրեշտակները բազմա-
 օր են նորանով, որ նոքա միմեանց հետ ապրում են սիրով անկեղծ են սի-
 րում միմեանց և միշտ ապրում են Տիրոջ հետ, Տէրը բոլորը գիտէ և միշտ
 նոր բան է յայտնում հրեշտակներին, Նոքա միշտ նոր բան են իմանում և
 աւելի իմացական են դառնում, Բոլոր հրեշտակները բաժանվում են 9 դա-
 սակարգի, Աւերիները միշտ Տիրոջից ստանում են պատուէրներ և տալիս են
 ստորիններին, Հրեշտակները միշտ աշխատում են օգնել մէկը միւսին Աստու-
 ծոյ կամքը կատարելու մէջ, Նոքա բոլորը հասկանում են Աստուծոյ իմաս-
 տուն գործերը և փառաբանում են Տիրոջը, Հրեշտակների հրահանգիչը Տէրն
 է, նոքա տեսնում են թէ նա ինչպէս է սիրում մարդոց, ուղարկում իւր
 արեգակը և անձրեւը բարիների և չարերի վերայ, Հրեշտակները նոյնպէս
 սովորեցնում են սիրել բարիներին և չարերին, ուրախանում են, տեսնելով
 բարի մարդոց և տխրում են, երբ մարդ մեղք է գործում, Հրեշտակները
 մասնակցում են Աստուծոյ գործերին մարդոց փրկութեան համար, Ամեն
 մարդու համար Տէրն ուղարկում է ամբողջ կեանքում մի պահապան հրեշ-
 տակ, որը միշտ պէտքէ հոգայ դորա մասին, Նա ուրախանում է, երբ մենք
 լաւ ենք վարվում և տխրում, երբ մենք Աստուծոյ կամքը չենք լսում,
 Եթէ հրեշտակը մեզ երեւար, որին արժանացան երբեմն և արդար մարդիկ,
 մենք կը տեսնէինք նոցա կամ ուրախ, կամ տխուր, լալկան, Միայն պահա-
 պան հրեշտակը չէ, որ ուրախանում է և տխրում մարդոց համար այլ և միւս
 հրեշտակները ևս, Ինչո՞ւ հրեշտակները այդպէս սիրում են մարդոց, Ա՞ւմ
 օրինակն է նոցա առաջը գտնվում, — Տիրոջ, Նոքա ի՞նչպէս են ապրում
 Տիրոջ հետ, Նոքա բոլորովին երջանիկ են, Գիտեն արդեօք նոքա թէ ի՞նչ
 պէս են ապրում մարդիկ երկրի վերայ և ի՞նչպէս են ապրում մեռածները,
 մեղաւորները և արդարները, — Նոքա գիտեն, որ մարդիկ աշխարհիս վերայ
 շատ ցաւեր ունին, իսկ մեղաւորների տանջանքները աւելի ծանր են լինում
 մահից յետոյ, Աշխատելով մարդուն սիրել ինչպէս Աստուածն է սիրում,
 նոքա մեզ համար ի՞նչ են ցանկանում, — Արդէս զի բոլորն էլ լաւ ապրին
 երկրիս վերայ և մահից յետոյ, Մենք ի՞նչով կարող ենք դիմել պահապան
 հրեշտակին, — Աղօթքով, Հարկաւո՞ր է արդեօք բարձր ասել, որ հրեշտակը
 լսէ մեզ, — Ա՛յ, Ի՞նչպէս կարող ենք մենք աղօթել հրեշտակին, — Մենք կա-
 րող ենք աղօթել մտքով, Աստուծոյ հրեշտակը հասկանում է մեզ, երբ մենք
 ինչ մի բան մտածում ենք, Պարող ե՞նք արդեօք ստանալ հրեշտակից բարձ-
 րաձայն պատասխան, Ստացել են արդեօք մարդիկ այսպիսի պատասխան, —
 Շատ քիչ, Մենք կարո՞ղ ենք առանց խօսքի իմանալ հրեշտակի պատաս-
 խանը, — Պարող ենք, Պարելի՞ք է մեր հոգու մէջ նկատել այդպիսի պատաս-

խան, Նման կը լինի՞ արդեօք այդպիսի խօսակցութիւնը հրեշտակի հետ մարդոց միմեանց մէջ արած խօսակցութեանն։ Արողէ՞ք արդեօք ասել թէ դուք այժմ ի՞նչ կը խնդրէք ձեր պահապան հրեշտակից։—Որ նա մեզ օգնէ նեղութեան մէջ, օգնէ սովորել, խնդրէ Տիրոջն մեր մեղքերը ներելու, պահպանէ առողջութիւնը, սովորեցնէ աղօթքը, պահպանէ վատութիւնից, չբարկածայ մեղ վերայ վատ գործերի և մտածմանց մասին։ Այդպիսի խօսքերով ձեզանից իւրաքանչիւրը խնդրեց պահապան հրեշտակից այն ինչ որ իրան հարկաւոր էր։ Ի՞նչի մասին էլի կարելի է խնդրել պահապան հրեշտակից։ Մեր պահապանն ո՞վ էր այս գիշեր, երբ մենք քնած էինք։ Ո՞չ մեր հայրը և ո՞չ էլ մայրը—չէին կարող պաշտպանել մեզ հիւանդութիւնից, մահից։ Մենք լաւ անցուցինք գիշերը։ Պահապան հրեշտակը մեզ պահպանեց։ Մենք նորան ի՞նչ կասեմք վերկենալով քնից։ Շնորհակալ կը լինինք նորանից։ Ի՞նչպէս պէտք է սկսել աղօթքը զէպի պահապան հրեշտակը — խնդիրքով թէ շնորհակալութեամբ։ Ամենից լաւ է նախ և առաջ շնորհակալ լինել, յետոյ խնդրել նորան մեր կարեաց մասին։

Զրուցարանական և պատմական ճանապարհով մենք հասանք պահապան հրեշտակի աղօթքն ուսանելուն։ Բայց նախ քան ուսուցանել սկսելը, հարկաւոր է մի քանի խօսք ասել այս հարցին վերաբերեալ։ Սովորական կարգը այսպէս է, որ երեսայքը կրօնագիտութեան կուրսը սկսելով աղօթքներն սովորելուց անցնումեն հանգանակին և 10 պատգամներին։ Ի պաշտպանութիւն այդպիսի եղանակի, ցոյց են տալիս, որ ուսումնարան մտնողը արդէն աղօթումէ։ Արեւոր է, որ նա ուսումնարանում ևս չմնայ ոչ մի օր առանց աղօթքի։ Յետոյ ասումեն, որ շատ երեսայք գուրս են գալիս ուսումնարանից կուրսն չաւարտած։ Աւտի և հարկաւոր է երեսայց սովորցնել մէկ երկու աղօթք—կանոնաւոր կերպով։ Ելի ցոյց են տալիս ծնողների պահանջը այդ մտքով, որ սօքա աւելի գնահատումեն երեսայց գիտութիւնը աղօթքներով։ Անհրաժեշտ է որ առաջ բերած խորհրդածութիւնները ունին իրանց հիմքը։ Բայց այդ հարցը ուսումնասիրելիս հարկաւոր է ուշադրութիւն դարձնել աղօթքի ներքին կողմի վերայ։ Առաջին նկատողութեան մասին կարելի է ասել, որ երեխան լծո՞ղ աղօթէ ինչպէս աղօթումէր, իսկ ուսումնարանումն և երկու ամիս, կէս տարի կարող է աղօթքը կարգաւ մեծը, երկրորդ տարի մեացած աշակերտը, եթէ կայ, կամ նոյն իսկ կրօնուսույցը, երրորդ նկատողութեան մասին կասենք, աւելի լաւ է ծնողացն փաստերով համոզեցնել ուսումնարանի մէջ կրօնական ուսուցմամբ և ոչ թէ նախապէս բաւականութիւն տալ նոցա խելացի ցանկութեանն։ Երկրորդ նկատողութիւնը ամենադժուարն է և դա վերաբերումէ ուսումնարանի կուրսի բոլոր առարկաներին։ Արեւի է միայն ասել, որ այդպիսի անբնականութիւնը, ինչպէս է աշակերտաց շուտ դուրս գալը, ոչ մի ծրագրով անկարելի է արգելք լինել, ուստի և ուսումնարանի ընդհանուր պահանջները պէտքէ ուղղուն դէպի այն, որ երեսայց հաղորդեն գիտութեան ճշանակեալ պաշար։ Բոլորը ինչ որ մշակուած է այս հարցի վերաբերմամբ,

նորան է հասցնվում, որ իւրաքանչիւր դաս պէտքէ վերջնական ձև ունենայ, Բայց և այդ գրութիւնը յառաջ է բերվում՝ որպէս ցանկութիւն, և ոչ անպայման պահանջ, Ասուցչի վերայ ևս առաւել մեծ պարտականութիւն կայ եռանդուն կերպով հասկանալու ծրագրի պահանջները և կեանքի երեւոյթիւնները և նորա մէջ համապատասխանութիւն վերականգնեցնելու:

$$T = \frac{1}{2} \pi \sqrt{\frac{L}{g}}$$

9. 1925.4.11.5.

ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ, ՍԵՐՆԴԻ ԱՌՈՂ, ԶԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ.

$$(G = F = \mathbb{Z} = \mathbb{Z}_2, \quad U_F = F = \mathbb{Z} = \mathbb{Z}_2, \quad P = Q = 1)$$

B.

Բայց մի՞թէ կարող էր առանց հետքի մոռացուել այդ գաղափարը, երբ որ նորա մէջ պարզ կերպով լսում էր իւրաքանչիւր հայր և մայր, ես և դու՝ թէ օգուտ տալիս էք ուսումնարան ձեր սիրելի որդւոց, որ նոքա խելօք և կրթութեամբ, բարի և ազնիւ, առողջ և ուժեղ մարդիկ դառնան։ Բայց զգո՛յշ կացէ՛ք, ուսումնարանը կրդեղնեցնի նորանց, կընիհարացնի և կըթուլացնի նոցա մարմինները, իսկ հիւանդ մարմնոյ մէջ զարգանումէ և հիւանդ հոգի։ Ձեր որդիքը կըվերադառնան ձեզ մօտ ֆիզիքսպէս հիւանդոտ և բարոյական ստոր արարածներ, նոքա կուենան զրգուող և չոր քնաւորութիւն, նոցա միտքը բութ կըլինի, նոցա սիրտը կըլինի ցամաք։ Ասորո՞ղ էին արդեօք հայրերը և մայրերը սառնարիւն կերպով լսել այս խօսքերը։ Եթէ որ նոքա կարող կըլինէին խօսքերից յետոյ հանգիստ մնալ, այն ժամանակ նոքա արժանի չէին լինիլ հայրեր և մայրեր սուրբ խօսքերին։ Բայց նոքա կարող էին մտածել թէ իրանց խարում են առանց մի պատճառի։ Եւ յօ՛ւ նոքա այդպէս կարող էին մտածել, եթէ միայն այդ խօսքերը դադարէ խօսքեր լինէին։ Եթէ որ այդ նոքա չունենային իրանց ճշմարտութիւնը հաստատող անհերքելի փաստեր։ Վիճակագրական թուանշաններ, Բաղդաւորապէս՝ այդ փաստերը քննուեցան, թուանշաններն հաւարուեցան և կասկածել այլ ես անկարելի էր։ Այդ ապացուցովեց՝ և իւրաքանչիւր ազնիւ մարդու վերայ այդ չարեաց դէմ կուուելու պարտականութիւն դրուեցաւ։ չընայելով որ նորան պաշտպանում էին հաշտութեամբ և անկասկածներ։

Ամենից առաջ դառնանք այն հետեանքներին որք ստացուել են ուսումնարանների մէջ սւսանող մանկանց աչքի հիւանդութիւնները քննելուց, Վիրիսովի և Կօնի ասելով կարճատեսութեան զարգացման վերայ զպրօցների արած ազդեցութիւնը, որին առաջ կուրօրէն պէտք էր հաւատալ միայն, գիտնական ճանապարհով ապացուցանելու առաջին փորձը արաւ անգլիացի Ուեբը ներկայ դարուս սկզբին 1812 թուին, նորա օրինակին հետեցին երկ-